

---

## ՀԱՅՈՑ ՍՄԲԱՏ Ա ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՂՎԱՆԻՑ ԵՎ ԿՂԱՐՁՔԻ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԹԱԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՇ

### ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

IX դ. վերջին Հայոց Սմբատ Ա թագավորի (890-914) կողմից թագավորվեցին Աղվանից և Կղարջքի (Վրաց կոչված) իշխանները: Աղվանից իշխան Համանը, թերևս, Առանշահիկների տոհմից էր, Աղվանքի Ծաքի քաղաքում հաստատված հայտնի հայ գործիչ Սահլ Սմբատյանի ժառանգներից<sup>1</sup>, իսկ Կղարջքի իշխանը (կուրապաղատ) Աստրներսեհն էր՝ Հայոց իշխան Աշոտ Բագրատունու (732-748) որդի Վասակի ժառանգներից<sup>2</sup>, որը 775 թ.՝ արաբական տիրապետության դեմ հայոց ապստամբության պարտությունից հետո ապստանել էր Կղարջքուն:<sup>3</sup> Սմբատ Ա-ի կողմից վերոհիշյալ իշխանների թագավորությունը դիտվել է որպես Աղվանից և Վրաց թագավորությունների վերականգնում<sup>4</sup>:

Աղվանից ու Կղարջքի իշխանների թագավորնանը վերաբերող հարցերը սերտ աղերս ունեն Աղվանքի և Կղարջքի՝ Հայ Բագրատունիների թագավորության կազմում ունեցած կարգավիճակի հետ, քանի որ վերջինս՝ Հայաստանից բացի, ընդգրկում էր նաև Կղարջքի կուրապաղատությունը, Վիրըն ու Աղվանքը<sup>5</sup>: Ուստի Աղվանից և Կղարջքի իշխանների թագավորության հարցերը պետք է դիտարկել Հայոց թագավորության քաղաքական զարգացումների համատեքստում:

<sup>1</sup> Համամի ծագման մասին մանրամասնորեն տե՛ս **Ա. Աղոնց**, Երկեր, հ. Ա, Եր., 2006, էջ 510-511, **Բ. Ուլուբարյան**, Խաչեմի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975, էջ 75-77, **Առաքել Դրվագներ**՝ Հայոց արևելից կողմանց պատմության, Եր., 1981, էջ 246, **Կրիմսկий А.** Страницы из истории северного или кавказского Азербайджана (классической Албании). Шеки // “Памяти академика Н. Я. Марра (1864-1934)”. М.-Л., 1938, էջ 374-375, **Ա. Յակոբեան**, Խաչեն-Խօսխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը թ-ժ-գ դարերում (քննական ակնարկ), «Հանդէս անսօրեայ», 2010, թիվ 1-12, էջ 74-82, **Ա. Եղիազարեան**, Աղուանից թագավորութեան պատմութեան որոշ խնդիրների շուրջ, «Հանդէս անսօրեայ», 2009, թիվ 1-12, էջ 162-165:

<sup>2</sup> Տե՛ս «Հայաքոմն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 83, 87-88 (այսուհետև՝ Վարդան վարդապետ և էջը):

<sup>3</sup> Տե՛ս **Ա. Աղոնց**, Երկեր, հ. Ա, էջ 485:

<sup>4</sup> Ինչպես կտեսնենք, թագավորի հոչակված Աստրներսեհը միայն Կղարջքի իշխանն էր, սակայն սկզբնադրյուրներում հանդես է գալիս որպես «Վրաց» իշխան, իսկ այնուհետև՝ թագավոր: Ամենայն հավանականությամբ, «Վրաց» իշխան և թագավոր կոչումներն արտահայտում էին գոյություն ունեցող իրադրությունը: Խնդիրն այն է, որ Աստրներսեհն իշխում էր գերազանցապես վրացադավան բնակչություն ունեցող շրջաններում: Հետագայում Աստրներսեհի սերունդների իշխանությունը սկսեց տարածվել նաև բուն Վիրքի վրա:

<sup>5</sup> Տե՛ս «Յովիաննու կարողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց», Եր., 1996, էջ 164 (այսուհետև՝ Յովիաննու Դրասխանակերտցի և էջը), «Պատմութիւն Շապիոյ Բագրատունույ», Եջմիածին, 1921, էջ 65-67, **Վարդան վարդապետ**, էջ 91 և այլն:

Համամ Առանշահիկի կողմից Աղվանից թագավորության վերականգնման վերաբերյալ տեղեկություն է պահպանել Մովսես Դասխուրանցին. «...Եթեք հարիւր երեսուն և վեց թուին (իմա՝ 887 թ. - Ա. Ե.) եղև Աշոտի Բագրատունույ նստուցանել զարոր թագաւորութեանն իւրոյ ի մեջ Հայաստանեաց...: Իսկ զալուստ Տաճկին ի Հայս և գրաւել զաշխարհն ընդ լծով ծառայութեան հարկաց թուականն Հայոց Յեսէ (իմա՝ 893 թ. - Ա. Ե.) լիներ...: Ապա բարեպաշտն Համամ որ և Աղուանից եղև թագաւոր, նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանս Աղուանից նորոգեաց, որպէս Աշոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւնն. այսք ի միում ժամանակի գործեցան»<sup>6</sup>:

Աստրներսէի Բագրատունու՝ թագավոր դառնալու վերաբերյալ վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին, ըստ որի՝ Սմբատ Ա-ն «կացուցանէ զնա (իմա՝ Աստրներսէին - Ա. Ե.) թագաւոր Վրաց աշխարհին (իմա՝ Կոլարջի - Ա. Ե.) և երկրորդ իւրոյ տեղութեանն զնա հաստատէ»<sup>7</sup>:

Վրաց պատմիչ Դավիթ որդի Սմբատը տեղեկացնում է, որ «Դավիթ կուրապաղատի որդի Աստրներսէին դրեցին վրաց թագավոր» 888 թ. տեղի ունեցած դեպքերից հետո<sup>8</sup>. Աստրներսէիի թագավորության վերաբերյալ նույն տեղեկություններն են հաղորդում նաև վրացական այլ աղբյուրներ:

Ստեփաննոս Օրբեյանը հավաստում է, որ երբ Հայոց թագավորության մասնատման համար դուռ բանացին Արծրունիները և թագ ստացան Աստրպատականի ամիրայից<sup>9</sup>, թագավոր դարձավ նաև Աստրներսէի Բագրատունի իշխանը, որից հետո «թագ կապեաց և Աղուանին Համամ»<sup>10</sup>: Ըստ որում՝ ինչպես հաղորդում է պատմիչը, Աստրպատականի ամիրան առաջարկեց թագադրել նաև Սյունյաց Վասակ իշխանին, բայց վերջինս հրաժարվեց<sup>11</sup>: Ստեփաննոս Օրբեյանի հաղորդումը, որը լիովին տարբերվում է վերոհիշյալ հեղինակների տեղեկություններից, ցույց է տալիս, որ Աղվանից և Կոլարջի իշխանների թագավորությունը պետք է քննության առնել միևնույն համատեքստում: Սյունյաց պատմիչի հաղորդումը, ինչպես կտեսնենք, լույս է սփոռում տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված մի կարևոր իրողության վրա:

Ն. Արբացը, անդրադառնալով Մովսես Դասխուրանցու վկայությանը, նշում է, որ ըստ պատմիչի՝ Համամը թագավոր է դարձել 893 թ.: Նրա կարծիքով, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունների՝ 893 թ. Համամը դեռևս թագավոր չէր: Այդ ժամանակ պատմիչը նրան անվանում է «մեծ իշխանն արևելից Համամ»<sup>12</sup>: Նա հայոց թագավոր Սմբատ Ա-ի հրա-

<sup>6</sup> Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Եր., 1983, էջ 335:

<sup>7</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 180-188:

<sup>8</sup> Տես Համբատ Դավթիս-Ճեզ. Իշխանության պատմությունը օ Բագրատիոնահ. Տես., 1979, էջ 34:

<sup>9</sup> Սյունյաց պատմիչը Յուսուփի փոխարեն նշում է Ավշինի անունը, որը սխալ է: Այդ պատճառով փորձ է կատարվել նշված իրադարձությունը տեղադրելու 890-ական թթ. առաջին կեսին, ավելի ճշգրիտ՝ Սմբատ Ա-ի թագավորության շրջանում (տես Հ. Ուրմագյան, Սյունիքը IX-X դարերում, Եր., 1958, էջ 92-93): Սակայն պետք է հիշել, որ խոսքն այն ժամանակաշրջանի մասին է, երբ թագ ստացավ Վասպուրականի Գագիկ իշխանը, այսինքն՝ այդ իրադարձությունը պետք է տեղի ունեցած լիներ 908 թ.:

<sup>10</sup> «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբեյան արքապիսկոպոսի Սիսեաց», Թիֆլիս, 1910, էջ 299:

<sup>11</sup> Տես նույն տեղը:

<sup>12</sup> Քանի որ Աղվանքը մտնում էր Հայոց թագավորության մեջ, ուստի նրա իշխան Համամին տրվող «Արևելից մեծ իշխան» կոչումից պետք է ենթադրել, որ Հայոց թագավորության կազմում «Արևելից» էր կոչում Աղվանից իշխանությունը (տես Ա. Եղիազարեան, նշվ. աշխ., էջ 167, 170):

մանում գնում է բանակցելու արարների հետ՝ հայոց կաթողիկոս Գևորգին գերությունից ազատելու նպատակով<sup>13</sup>: Յովհաննես Դրասխանակերտցին և Մովսես Դասխուրանցին հաղորդում են, որ հայոց կաթողիկոսը արարների կողմից ծերբակալվել է 893 թ.<sup>14</sup>: Իսկ այն, որ Վերջին իրադարձության հետ կապված, Ասողիկը Յամամին կոչում է թագավոր<sup>15</sup>, Ն. Աղոնցը հակված է համարելու հետին թվով արված դիտարկում<sup>16</sup>:

Ա. Կրիմսկին Յամամի՝ Աղվանից թագավոր դաշնալը դնում է 885 թ.<sup>17</sup>: Նույն տեսակետն է արտահայտում նաև Բ. Ուլուբարյանը: Նա Մովսես Դասխուրանցու վերոհիշյալ հաղորդումը քննության է առնում ոչ ամբողջությամբ, այլ հետևյալ ձևով. «...բարեպաշտն Յամամ նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանս Աղուանից նորոգեաց, որպէս Աշոտ Բագրատունի՝ զՅայոց թագաւորութիւնն. այսք ի միում ժամանակի գործեցան»: Այս հատվածի հիման վրա նա Յամամի թագավոր դաշնալը թվագրում է 880-ական թվականներով, այսինքն՝ Աշոտ Ա-ի կողմից Յայոց թագավորության վերականգնան հետ միաժամանակ<sup>18</sup>: Վերջին թվագրումը մուտք է գործել նաև «Յայ ժողովորի պատմության» ակադեմիական հրատարակություն<sup>19</sup>: Յ. Աճառյանը կարծում է, որ 893 թ. Յամամն արդեն թագավոր էր<sup>20</sup>: Ս. Բարխունյանը Յամամի թագավոր դաշնալը դնում է 885-894 թթ. միջև<sup>21</sup>: Յամամի թագաղությունը, ընդհանուր առմամբ, Ա. Տեր-Ղևոնդյանը դնում է IX դ. Երկրորդ կեսին<sup>22</sup>, իսկ Ա. Յակոբյանը՝ IX դ. վերջին<sup>23</sup>: Վրաց պատմագիտության մեջ այդ իրադարձությունը թվագրված է 893-ով<sup>24</sup>: Կ. Ցուկերմանը Յամամի թագավոր հօչակվելը տեղադրում է 894 թ. վերջին կամ 895 թ. սկզբին<sup>25</sup>:

Սկզբում քննության առնենք Մովսես Դասխուրանցու հաղորդումը խնդրու առարկա շրջանի իրադարձությունների ժամանակագրության համատեքստում: Նախ՝ Աշոտ Բագրատունին վերականգնում է Յայոց թագավորությունը, իսկ այնուհետև՝ տարիներ անց, ըստ պատմիչի՝ 893 թ., արարները հարկատու են դարձնում Յայոց թագավորությունը: Յայտնի է, որ 893 թ. Դվինում երկրաշարժ տեղի ունեցավ<sup>26</sup>, որից հետո Յայաստան արշավեց Ատրպատականի Ափշին ամիրան: Դողսի ճակատամարտում հայկական բանակը հաղթանակ տարավ, որից հետո Ափշինը Սմբատ Ա-ից

<sup>13</sup> Տես Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 174:

<sup>14</sup> Տես նոյն տեղը, էջ 172-174, Մովսես Կաղանկատվացի, էջ 335:

<sup>15</sup> Տես «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 161:

<sup>16</sup> Տես Ա. Աղոնց, Երկեր, հ. Ա, էջ 512:

<sup>17</sup> Տես Կրամսկի Ա., նշան. աշխ., էջ 376:

<sup>18</sup> Տես Բ. Ուլուբարյան, Խաչենի իշխանությունը..., էջ 75-77, 80:

<sup>19</sup> Տես «Յայ ժողովորի պատմություն», հ. III, Եր., 1976, էջ 25:

<sup>20</sup> Տես Յ. Աճառյան, Յայոց անձնանունների բառարան, հ. Գ, Եր., 1948, էջ 25:

<sup>21</sup> Տես Ս. Բարխունյան, Արցախի, Շաքի եւ Փախսոսի իշխանությունները IX-X դարերում, «ՊԲՀ», 1971, թիվ 1, էջ 68:

<sup>22</sup> Տես Տեր-Գևոնդյան Ա. Արմենիա և Արաբսկի խալիֆատ. Եր., 1977, էջ 239:

<sup>23</sup> Տես Ա. Յակոբեան, նշան. աշխ., էջ 80:

<sup>24</sup> Տես «Օчерки истории Грузии». Т. II. Тб., 1988, էջ 274:

<sup>25</sup> Տես Zuckerman, C. À propos du livre des cérémonies, II, 48, “Travaux et Mémoires”, 13, Paris, 2000, էջ 568:

<sup>26</sup> Տես Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 164-166, Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Եր., 1985, էջ 356-358:

խնդրեց վճարել արքունի հարկերը, և Սմբատը համաձայնեց<sup>27</sup>: Փաստուն, պատմիչի «գալուստ Տաճկին ի Յայս և գրաւել զաշխարհն ընդ լծով ծառայութեան հարկաց թուականն Յայոց Յնք լինէր» հաղորդումը վերաբերում է նշված դեպքերին: Այդ դեպքերից հետո, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, Արեւելից մեծ իշխան Յամամը Սմբատ Ա-ի հրամանով փորձեց գերությունից ազատել Յայոց կաթողիկոսին: Եթե համադրենք Մովսես Դասխուրանցու և Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունները, ապա կարող ենք արձանագրել, որ 893 թ.՝ Դողսի ճակատամարտի ժամանակ և դրանից հետո, երբ Յամամը բանակցությունների մեջ էր մտել արարեների հետ՝ կաթողիկոսին ազատելու համար, նա դեռևս թագավոր չէր: Սակայն նույն թվականին կամ, որ ավելի հավանական է, արդեն 894 թ., դատելով Մովսես Դասխուրանցու հաղորդումից՝ նա թագավոր դարձավ: Ըստ պատմիչի, երբ Յայաստանը հարկատու դարձավ, «ապա բարեպաշտն Յամամ...զկործանեալ թագաւորութիւն տանս Աղուանից նորոգեաց»: Ընդ որում՝ պատմիչը հավելում է, որ Յամամը վերականգնել է Աղվանից թագավորությունը, ինչպես Աշոտ Բագրատունին՝ Յայոց թագավորությունը, և «այսք ի միում ժամանակի գործեցան»: Վերջին տեղեկության վերաբերյալ Ա. Յակոբյանը իմանավոր կերպով ցույց է տվել, որ այն ընդիշարկություն է, և որ այնտեղ հստակ նշված է եղել վերականգնան թվականը<sup>28</sup>: Այս ամենի հիման վրա պետք է բխեցնել, որ Յամամը թագավոր է դարձել 893 թ. դեպքերից հետո՝ 894 թ., որը, մեր կարծիքով, կապված էր նրա ջանքերով Յայոց կաթողիկոսին գերությունից ազատելու իրողության հետ: Կարծում ենք, որ 894 թ. Յամամին թագարել է Սմբատ Ա-ն, քանի որ նա Դողսի ճակատամարտում հաղթանակ էր տարել և իրեն շատ վստահ էր զգում: Խնդիրն այն է, որ Յամամին այդ ժամանակ կարող էին թագադրել կամ Սմբատ Ա-ն, կամ Ավշինը: Վերջինս, ինչպես հայտնի է, Յայոց թագավորությունը թուլացնելու նպատակով հետազայում թագադրեց Գագիկ Արծունուն: Անկասկած, 893 թ. պարտություն կրած և Սմբատ Ա-ի հետ հաշտված Ավշինը Յամամին թագադրել չէր կարող: Յամամի կողմից ինքն իրեն թագավոր հռչակելու հնարավորությունը ևս վերոհիշյալ պայմաններում անհնար էր, քանի որ նա Յայոց թագավորի հպատակն էր: Ինչ վերաբերում է Սմբատ Ա-ի կողմից Յամամին թագադրելու հարցին, ապա, ինչպես կտեսնենք, Կղարջի կուրապաղատ Աստրեսեհը Սմբատ Ա-ից թագստացվ հավատարմության համար, ուստի նույն պատճառով Յայոց թագավորը կարող էր թագադրել նաև Յամամին:

Ինչ վերաբերում է Կղարջի Աստրեսեի կուրապաղատի թագադրությանը, ապա այդ հարցում ամեն ինչ կարծես թե ավելի պարզ է: Յայտնի է, որ Կղարջի Բագրատունիներն Աշոտ կուրապաղատի օրոք (մահ.՝ 826 թ.) Բյուզանդիայի կողմից ստացել էին կուրապաղատի աստիճամ<sup>29</sup>: Այդ աստիճանով էլ նրանք հանդես են գալիս հետազայում մինչև Աստրեսեի թագադրությունը<sup>30</sup>: Ըստ Ի. Զավակիշվիլու՝ Աստրեսեիի թագադրությունը

<sup>27</sup> Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 172:

<sup>28</sup> Տե՛ս Ակոպյան Ա. Ալբания-Ալյանք в греко-латинских и древнеармянских источниках. Еր., 1987, էջ 203-210:

<sup>29</sup> Տե՛ս Կարդան Վարդապետ, էջ 83-84:

<sup>30</sup> Տե՛ս «Օտար աղբյուրները Յայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Յ. Բարթիկյանի, Եր., 1970, էջ 15-17:

տեղի է ունեցել 888 թ., իսկ ըստ Ե. Տակափշվիլու՝ 890 թ.<sup>31</sup>: Մ. Բրոսսեն, Կ. Թումանովը և Ս. Երեմյանն այդ իրադարձությունը թվագրում են 888 թ.<sup>32</sup>, իսկ Մ. Չամչյանցը, Յ. Մարկվարտը, Ն. Աղոնցը և Մ. ճանաշյանը կարծում են, որ Ատրներսեհի թագադրությունը տեղի է ունեցել 899 թ.<sup>33</sup>: Ատրներսեհի թագադրությունը տեղադրվել է նաև մոտավորապես 906-908 թթ. միջև<sup>34</sup>:

Վրաց թագավորության ստեղծման թվականը ճշգրտելու համար իհնք ենք ընդունում Հովհաննես Դրասխանակերտցու երկում նկարագրված՝ 890-ական թթ. իրադարձությունների ժամանակագրական հերթականությունը: Ըստ որում՝ Սմբատ Ա-ի կողմից Կղարջի կուրապաղատ Ատրներսեհի թագադրության մասին մանրամասն տեղեկություններ է պահպանել միայն Հովհաննես Դրասխանակերտցին: Ըստ նրա՝ Դվինի 893 թ. երկրաշարժից հետո Ափշինը հարձակվեց Զայոց թագավորության վրա, սակայն պարտություն կրեց Դողսի ճակատամարտում<sup>35</sup>: Այնուհետև Վասպուրականի Աշոտ իշխանը (895-905) լքում է Սմբատ Ա-ին և մեկնում Ափշինի մոտ<sup>36</sup>: Դրանից հետո, թերևս Սմբատ Ա-ի օգնությամբ<sup>37</sup>, Վասպուրականին տիրում է Գագիկ Ապումրվանը, որը ձերբակալում է Աշոտին և նրա երկու եղբայրներին<sup>38</sup>: Տարոնի Դավիթ իշխանը մահացավ Դվինի երկրաշարժից երկու տարի անց՝ 895 թ.<sup>39</sup>, որից հետո Ամինի ամիրան, հաղթելով նրան փոխարինած Գուրգենին, տիրեց Տարոնի իշխանությունը<sup>40</sup>: Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու տեղեկություններից՝ վերոհիշյալ իրադարձությունները տեղի են ունեցել 895 թ.: Տարոնն ազատագրելու համար, թերևս 896 թ., Սմբատ Ա-ն արշավանք կազմակերպեց Ամինի ամիրայի դեմ: Զայոց բանակը Գագիկ Ապումրվանի դավաճանության պատճառով ծանր պարտություն կրեց<sup>41</sup>: Օգտվելով Սմբատ Ա-ի պարտությունից՝ Զայաստան է ներխուժում Ափշինը<sup>42</sup>: Այդ իրադարձությունը թերևս տեղի է ունենում 897 թ.<sup>43</sup>, քանի որ

<sup>31</sup> Տե՛ս «Очерки истории Грузии», հ. II, էջ 310:

<sup>32</sup> Տե՛ս Brosset, M. Histoire de la Géorgie, I, St.-Petersbourg, Imprimerie de L'Academie Impériale des sciences, 1849, էջ 273-279, Toumanoff, C. The Bagratids of Iberia from the eight to the eleventh Century.-“Le Museon”, LXXIV, Idem. Studies, Louvain, 1961, էջ 21-25, Еремян Հ. Պրисоединение северо-западных областей Армении к Византии в XI веке // «Լրաբեր (հաս. գիտ.)», 1971, թիվ 3, էջ 5, ծանոթ. 7:

<sup>33</sup> Տե՛ս Մ. Չամչեանց, Պատմութիւն Զայոց, հ. Բ, Եր., 1985, էջ 727, ( Յ. Մարկուարտ, Զայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, ծանօթութիւներով, գերմաներեն թարգմանեց Յ. Մ. Չապոզեան, Վիեննա, 1913, էջ 148 (Անդրիի), Ն. Աղոնց, Երկեր, հ. Ա, էջ 501, Մ. ճանաշյան, Դաւիթ կիւրապաղատ (պատմական ուսումնասիրութիւն), Վենետիկ - Ա. Ղազար, 1972, էջ 13-14):

<sup>34</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 31-32:

<sup>35</sup> Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 172:

<sup>36</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 174:

<sup>37</sup> Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 362-364, Շապուհ Բագրատունի, էջ 84:

<sup>38</sup> Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 176:

<sup>39</sup> Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 356-358:

<sup>40</sup> Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 176:

<sup>41</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 176-178: Ըստ Մովսես Դավիտուրանցու՝ Սմբատ Ա-ի արշավանքն Ամինի ամիրայության դեմ տեղի է ունեցել 893 թ. դեպքերից չորս տարի անց, այսինքն՝ 896/897 թ. (էջ 336):

<sup>42</sup> Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 180-184:

<sup>43</sup> Ըստ Մովսես Դավիտուրանցու՝ արշավանքը տեղի է ունեցել 897 թ. (տե՛ս Մովսես Կաղանկատվացի, էջ 337): Ըստ պատմիչի՝ նույն թվականին վախճանվեց Գևորգ կաթողիկոսը (տե՛ս նույն տեղը):

նույն տարվա վերջին (ձմռանը) մահացավ Գևորգ կաթողիկոսը (877-897)<sup>44</sup>: Հաջորդ կաթողիկոսը՝ Մովսեսը, մահացավ յոթ ամիս գահակալելուց հետո<sup>45</sup>: Քանի որ Գևորգ կաթողիկոսը մահացել էր 897 թ. վերջին, իսկ Մաշտոցը՝ կաթողիկոս դարձել 898 թ. գարնանը<sup>46</sup>, ուստի Մաշտոցի գահակալությունը պետք է ավարտված լինի 898 թ. վերջին, որից հետո կաթողիկոս դարձավ Յովիաննես Դրասխանակերտցին (898-929): Այդ տարի կառուցվեց արքայանիստ Երազգավորսի եկեղեցին: Ամենայն հավանականությամբ, արդեն 899 թվականին է վերաբերում Յովիաննես Դրասխանակերտցու այն վկայությունը, որ Սմբատ Ա-ն, գնահատելով Կողարքի կուրապաղատ Ատրներստիի հավատարմությունը, նրան թագադրում է<sup>47</sup>: Ընդ որում՝ Յայոց արքան նրան հոչակում է «թագաւոր Վրաց աշխարհին»<sup>48</sup>, թեև նա միայն Կողարքի իշխանն էր և Վիրքին դեռ չէր տիրում<sup>49</sup>. Կարևոր է այն, որ հաղորդելով Ատրներստիի թագադրության մասին, որին հետևում է Ափշինի արշավանքը, թերևս՝ 900 թ., պատմիչը նրան դարձյալ կուրապաղատ է կոչում<sup>50</sup>:

Ափշինը, որոշ ժամանակ ասպատակելով Յայաստանը և Վիրքը, ինչպես նաև փորձելով խաբեությամբ ձերբակալել Սմբատ Ա-ին, հեռանում է Ատրպատական՝ Նվինում թողնելով իր որդուն և մեծ ներքինապետին: Տայքում անրացած Սմբատ Ա-ն վերադառնում է, հանդիպում մեծ ներքինապետին և հաշտվում նրա հետ, որից հետո Ափշինի որդուն նա շուրջ մեկ տարի ոռճիկ էր վճարում<sup>51</sup>: Ոռճիկ վճարելու մեկ տարին ամենայն հավանականությամբ պետք է հաշվել 900 թվականի կեսերից: Այնուհետև, հավանորեն 901 թ., մեծ ներքինապետը հեռանում է Յայաստանից՝ Սմբատ Ա-ին հանձնելով նրա որդի Աշոտին և նյուս որդի Մուշեղի կնոջը, որոնք պատանդ էին պահպում նրա մոտ: Այդ պատճառով 901 թ. Ափշինը կրկին որոշում է արշավել Յայաստան, սակայն ճանապարհին մահանում է<sup>52</sup>:

Ժամանակագրական վերոհիշյալ ճշգրտումներից պարզ է դառնում, որ Կողարքի Ատրներստի կուրապաղատի թագադրությունը Սմբատ Ա-ի կողմից տեղի է ունեցել 899 թ.:

Ճշգրտելով Յամամի և Ատրներստիի թագադրությունների թվականները՝ արձանագրենք նաև, որ Սմբատ Ա-ի կողմից նրանց տրված թագերը, ընդհանուր առմամբ, քաղաքական լուրջ նշանակություն չունեին: Ինչպես տեսանք, Ատրներստիի համար այն իրենից ներկայացնում էր միայն Յայոց թագավորության աստիճանակարգում երկրորդ տեղի ամրագրում: Այդ իսկ

<sup>44</sup> Տե՛ս Յովիաննես Դրասխանակերտցի, էջ 184:

<sup>45</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 186:

<sup>46</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>47</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 186-188:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 188:

<sup>49</sup> Տե՛ս 3. Մարկուարտ, Յայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 138, Ա. Ալոնց, Երկեր, հ. Ա, էջ 504, Ա. Եղիազարյան, Կողարքի կուրողապաղատությունը և Վիրքը հայ Բագրատունիների տերության կազմում, Պատմամշակութային ժառանգության մատենաշար, «Յուշարձան տարեգիրք», Զ, 2010, էջ 209-216:

<sup>50</sup> Տե՛ս Յովիաննես Դրասխանակերտցի, էջ 188:

<sup>51</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 190:

<sup>52</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 190-192: Ափշինի մահը Թովմա Արծրունին դնում է 898 թ. (տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 376): Ըստ պատմիչի՝ Ափշինի մահից հետո միայն վախճանվեց Գևորգ կաթողիկոսը (տե՛ս նույն տեղը): Արծրունյաց պատմիչի նշված հաղորդումը պարունակում է ժամանակագրական սխալներ:

պատճառով Հովհաննես Դրախմանակերտցին Ատրներսեհին շարունակում է կոչել կուրապաղատ, իսկ Համամին՝ Արևելից մեջ իշխան, քանի որ թագավոր դառնալուց հետո նրանց կարգավիճակը Հայոց թագավորության համակարգում չէր փոխվել: Յ. Բարթիկյանը ցույց է տվել, որ Հայոց թագավորին Բյուզանդիայի կայսրը կոչում էր «որդի», որով արտահայտվում էին նրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունները: Ինչ վերաբերում է Հայոց թագավորությանը, ապա նույն կերպ Հայոց թագավորի համար որդի էին հանդիսանում Վրաց (իմա՝ Կղարջքի) իշխանը (հետագայում՝ թագավորը) և Աբխազաց թագավորը<sup>53</sup>: Գոյություն ուներ, սակայն, նի եւկան տարբերություն: Ի տարբերություն Բյուզանդիայի կայսեր նկատմամբ Հայոց թագավորի խորհրդանշական «որդիության»՝ Հայոց թագավորի «որդիների» իշխանությունները, ինչպես տեսանք, Հայոց թագավորության մաս էին կազմում, իսկ այդ իշխանները, բացի «որդի» լինելուց, նաև հպատակ և «ծառա» էին Հայոց թագավորի համար<sup>54</sup>: Ուստի և զարմանալի չէ, որ Եթե բյուզանդացիները այսրկովկասյան իշխաններին կոչում էին իշխան կամ կուրապաղատ, ապա Հայոց իշխանին (հետագայում՝ Հայոց թագավորին)՝ իշխանաց իշխան (արքոնտների արքոնտ)<sup>55</sup>:

Արդ, անդրադառնանք Ստեփաննոս Օրբելյանի հաղորդմանը: Այստեղ առաջին հայացքից ամեն ինչ պարզ է: Աղվանից և Կղարջքի իշխանների թագաղորությունը տեղի է ունեցել 908 թ.<sup>56</sup> Վասպուրականի թագավորության ստեղծումից հետո: Պատմիչի հաղորդումը, սակայն, լուրջ հակասություն է ծնուն, քանի որ Համամն ու Ատրներսեհը թագաղուվել էին ոչ թե Վասպուրականի թագավորության իհմնադրումից (908 թ.) հետո, այլ հաջորդաբար՝ 894 թ. և 899 թ.: Մյուս կողմից, Եթե հավաստի է պատմիչի հաղորդած տեղեկությունը, ապա մենք դրանով կարող ենք կատարել կարևոր բացահայտում:

Կարելի է ենթադրել, որ սխալ է Մյունյաց պատմիչի տեղեկությունն այն մասին, որ Հայոց թագավորին հպատակ իշխանների թագաղորությունը տեղի է ունեցել 908 թ. կամ դրանից հետո: Սակայն տեսանք, որ Հովհաննես Դրախմանակերտցին, պատմելով Սմբատ Ա-ի կողմից Ատրներսեհի թագաղորության մասին, այնուհետև ամմիջապես նրան դարձյալ կուրապաղատ է կոչում: Ապա, նկարագրելով 902-903 թթ. դեպքերը, պատմիչն Ատրներսեհին կրկին որպես թագավոր է հիշատակում<sup>56</sup>: Կարծիք է հայտնվել, որ Ափշինի 900 թ. արշավանքը Հայաստան տեղի է ունեցել Սմբատ Ա-ի կողմից Ատրներսեհի թագաղորության պատճառով, քանի որ թագաղորության իրավունք ուներ միայն խալիֆան<sup>57</sup>: Եթե իհմք ընդունենք Ափշինի արշավանքի այդ միանգամայն հնարավոր դրդապատճառը, ապա կարող ենք առանց երկնտելու կարևոր եղանակացության հանգել: Ափշինից Սմբատ Ա-ի կրած պարտությունից հետո Ատրներսեհի, ինչպես նաև Համամի թագաղորությունը կարող է առաջանալ:

<sup>53</sup> Տես Յ. Բարթիկյան, Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., «Լրաբեր (հաս. գիտ.)», 1996, թիվ 2, էջ 27-28:

<sup>54</sup> Տես Ասողիկ, էջ 169-170:

<sup>55</sup> Տես Յ. Բարթիկյան, նշվ. աշխ., X-XI դդ., էջ 27-28:

<sup>56</sup> Տես Հովհաննես Դրախմանակերտցի, էջ 200:

<sup>57</sup> Տես «Հայ ժողովորի պատմություն», հ. III, էջ 32:

թյունները, անկասկած, կորցրել էին իրենց նշանակությունը: Այդ պատճառով միայն Ափշինի մահից հետո է, որ Յովհաննես Դրասխանակերտցին Ատրներստեհին կրկին թագավոր է կոչում:

Ստեփաննոս Օրբելյանի հիշատակությունն ունի մի կարևոր նշանակություն: Վասպուրականի թագավորության ստեղծումը նա դիտում է որպես Յայոց թագավորության նաև ատման գործընթացի սկիզբ, որին հաջորդեց «Վրաց» և Աղվանից թագավորությունների ստեղծումը: Եթե հիմնվենք պատմիչի հաղորդման վրա, կարող ենք կատարել կարևոր եզրակացություններ: 908 թ. Յուսուփը լուրջ քայլեր է կատարում Յայոց թագավորությունը մասնատելու և թուլացնելու ուղղությամբ: Այդ նպատակով նա թագադրում է Գագիկ Արծրունուն<sup>58</sup>: Սյունյաց իշխանը Յուսուփի առաջարկած թագից հրաժարվում է: Յուլժ կարևոր տեղեկություն է պահպանել Ասողիկը, որը, խոսելով 908 թ. իրադարձությունների մասին, տեղեկացնում է, որ Յուսուփի ամիրայի մոտ «Երթեալ Արտմերսեհ Վրաց թագաւոր և Գագիկ իշխան Վասպուրականի» ու այլ հայ իշխաններ<sup>59</sup>: Փաստորեն, ի տարբերություն Յովհաննես Դրասխանակերտցու, համաձայն որի՝ Ափշինի մոտ գնացել է Գագիկ Արծրունին և թագ ստացել<sup>60</sup>, Ասողիկը հաղորդում է, որ Յուսուփի մոտ է գնացել նաև Ատրներստեհ Բագրատունին: Կարծում ենք, որ Յուսուփին հարած Ատրներստեհ Բագրատունուն (անկասկած նաև Յամամին) հնարավոր էր բավարարել միայն թագավորական թագով, քանի որ նա արդեն այդպիսի թագ ստացել էր 899 թ., սակայն Ափշինի 900 թ. արշավանքը և Ատրներստեհին «Վրաց թագավոր» հրչակած Սմբատ Ա-ի պարտությունն ի չիք էին դարձրել այդ թագը: Նման ճակատագիր պետք է բաժին հասած լիներ նաև Յամամի թագին: Նշենք նաև այն իրողությունը, որ Յուսուփի 909 թ. արշավանքի ժամանակ, դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից, Սմբատ Ա-ն օգնություն չստացավ ոչ Ատրներստեհից և ոչ Էլ Յամամից, որը պետք է հետևանք լիներ այն իրողության, որ նրանք հարել էին Յուսուփին: Յայոց թագավորը ստիպված ապաստանեց Արխազաց թագավորությունում<sup>61</sup>: Այն, որ շատ հավանական է Ատրներստեհի և Յամամի թագադրությունը Յուսուփի կողմից, ցույց է տալիս թեկուզ այն փաստը, որ վերջինս թագ էր առաջարկել նաև Սյունյաց Վասակ իշխանին: Այսինքն՝ Յայոց թագավորությունը մասնատելու նպատակով Յուսուփի համար ոչ մի խնդիր չկար Գագիկ Արծրունուց և Վասակ Սյունյուց թագի թագ առաջարկելու նաև Ատրներստեհին և Յամամին:

Այսպիսով, Ատրներստեհի թագ ստանալը Յուսուփից կարելի է բխեցնել սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից, մինչդեռ Յամամի՝ Յուսուփից թագ ստանալը նման հիմնավորում չի ստանում: Սակայն, այդ իրադարձությունը 908 թ. ավելի ուշ տեղի ունենալ չէր կարող, քանի որ արդեն դրանից հետո Յուսուփը սկսել էր իր կողմն անցած իշխանների նկատմամբ բռնություններ իրականացնել, որի հետևանքով նրանից հեռացան Գագիկ Արծրունին և այլ իշխաններ<sup>62</sup>: Ուստի արձանագրենք միակ հնարավոր եզ-

<sup>58</sup> Տե՛ս Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 212:

<sup>59</sup> Տե՛ս Ասողիկ, էջ 164:

<sup>60</sup> Տե՛ս Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 212:

<sup>61</sup> Տե՛ս նոյն տեղը, նաև՝ «Մատիան Կարլիսա». Տб., 1976, էջ 32:

<sup>62</sup> Տե՛ս Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 228-238:

րակացությունը. Համամը թագ է ստացել Յուսուփից 908 թ.՝ Աստրներսեհի հետ միասին: Ասողիկի մեկ այլ արժեքավոր տեղեկության համաձայն, երբ Աշոտ Երկար Հայաստանը մաքրեց թշնամուց, նա «գտանէ զժառայս հօր իւրոյ թագաւորեալ. զինքն անուանեաց Շահանշահ, այսինքն թագաւորաց թագաւոր»<sup>63</sup>: Ինչպես հաղորդում է Վարդան Վարդապետը, խոսքը մասնավորապես Աշոտ Երկարի հորեղորորդի Աշոտի, Գագիկ Արծրունու, Աստրներսեհ (հեղինակի տեղեկության մեջ՝ Ներսեհ) Բագրատունու և, թերևս, նաև Համան Առանշահիկի մասին է: Եվ Աշոտը «կոչեցաւ ի վերայ նոցա Շահնշահ (ինա՞ թագավորների թագավոր - Ա. Ե.)»<sup>64</sup>: Ասողիկի հաղորդման տրամաբանությունը պարզ է: Թեև, օրինակ՝ Համամն ու Աստրներսեհը թագ էին ստացել Սմբատ Ա-ից, դրանով նրանց միջև հարաբերությունները չեն փոխվել, և ավատափիրական աստիճանակարգի առումով Համամն ու Աստրներսեհը շարունակում են դիտարկվել որպես «ծառա» Հայոց թագավորի համար: Բայց Ասողիկի հաղորդումն ունի ևս մեկ կարևոր կողմ: «Գտանէ» բառը ցույց է տալիս, որ կարծես թե Սմբատ Ա-ի «ծառաներն» առանց նրա հավանության էին թագավոր հռչակվել, ավելի ծիշտ՝ այլ տիրակալների կողմից: Ահա այստեղ, մեր համոզմամբ, թաքնված է կարևոր իրողությունը: 908 թ. Յուսուփը, բացի Վասպուրականի Գագիկ իշխանից, թագադրել էր նաև Կղարջի Աստրներսեհ և Աղվանից Համան իշխաններին:

Վերոհիշյալ տեսակետի հաստատման համար անհրաժեշտ է պատասխանել ևս մեկ հարցի: Եթե Աստրներսեհը, փաստորեն, լքել էր ժամանակին իրեն թագաւորած Սմբատ Ա-ին, ապա ինչու է Հովհաննես Դրասխանակերտոցին նրա հասցեին արդեն Աշոտ Բ-ի օրոք դրվատանքի խոսքեր ասում<sup>65</sup>: Պատմիչի տեղեկություններից հայտնի է, որ Աստրներսեհն առաջին անգամը չէ, որ լքում էր Սմբատ Ա-ին: 906 թ. արխազական արշավանքից հետո, դժողով լինելով գերված Արխազաց թագավորի ազատ արձակման փաստից, Աստրներսեհը դավադրություն էր կազմակերպել Հայոց թագավորի դեմ, սակայն պատճից խուսափել էր անձնատուր լինելով և որդուն պատանդ տալով միայն<sup>66</sup>: Կարծում ենք, որ դրվատանքի խոսքերի պատճառն այն է, որ Աստրներսեհն օգնություն էր ցուցաբերել արաբների դեմ պայքարող թագաժառանգ Աշոտիմ<sup>67</sup>, իսկ վերջինիս թագավոր դառնալուց հետո՝ ընդունել նրա գերիշխանությունը<sup>68</sup>: Պատմիչը նման վերաբերմունք ունի նաև Գագիկ Արծրունու նկատմամբ՝ Յուսուփից թագ ստանալուց հետո պախարակում է նրամ<sup>69</sup>, իսկ Յուսուփից հեռանալուց հետո՝ գովաբանում<sup>70</sup>:

Ամփոփելով քննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Հայոց թագավորության Արևելից մեծ իշխան Համամը Սմբատ Ա-ի կողմից թագադրվել է 894 թ., իսկ Կղարջի կուրապաղատ Աստրներսեհ Բագրատունին՝ 899 թ.: Աստրներսեհի թագադրությունը պատճառ է դարձրել Աստրա-

<sup>63</sup> Ասողիկ, էջ 169-170:

<sup>64</sup> Վարդան Վարդապետ, էջ 93:

<sup>65</sup> St. ս Հովհաննես Դրասխանակերտոցի, էջ 247:

<sup>66</sup> St. ս նույն տեղը, էջ 204-212:

<sup>67</sup> St. ս նույն տեղը, էջ 266:

<sup>68</sup> St. ս նույն տեղը, էջ 310:

<sup>69</sup> St. ս նույն տեղը, էջ 212:

<sup>70</sup> St. ս նույն տեղը, էջ 238:

տականի ամիրա Ավշինի 900 թ. արշավանքի համար, Սմբատ Ա-ն պարտություն է կրել, իսկ նրա կողմից Արևելից մեծ իշխանին և Կղարջի կուրապաղատին տրված թագերը կորցրել են իրենց նշանակությունը: 908 թ. Յայոց թագավորին հպատակ մի շարք իշխաններ, այդ թվում՝ Գագիկ Արծրունին, Ատրներսեհ Բագրատունին և Յամամ Առանշահիկը, հարել են Ատրպատականի Յուսուփի ամիրային: Վերջինս Յայոց թագավորությունը մասնատելու և բուլացնելու նպատակով նրանց թագադրել է:

**АРМАН ЕГИАЗАРЯН – *О коронации албанского и кларджеского князей армянским царём Смбатом I.*** – Согласно источникам албанский князь Хамам и кларджеский (грузинский) князь (курапалат) Атрнерсэ были коронованы армянским царём Смбатом I. Исследование показывает, что Хамама он короновал в 894 году, тогда как Атрнерсэ – в 899-м.

Эти акции не имели политического значения. И Хамам и Атрнерсэ были вассалами армянского царя. Для Атрнерсэ корона представляла всего лишь вторую ступень в иерархии Армянского царства. По этой причине армянский историк Иованнес Драсханакертци продолжает именовать Атрнерсэ курапалатом, а Хамама – великим князем.

**ARMAN YEGHIAZARYAN – *About Crowning the Princes of Albania and Kgharjk by the Armenian King Smbat I.*** – According to sources prince of Albania Hamam and prince of Kgharjk (prince of “Georgians”) Atrnerseh were crowned by Armenian King Smbat I. Study shows, that Smbat I crowned Hamam in 894 and Atrnerseh in 899.

The crowns were not of political significance and both Hamam and Atrnerseh were vassals of the Armenian King. For Atrnerseh, the crown only represented the second scale in hierarchy of the Armenian Kingdom. For that reason, Armenian historian Hovhannes Drashnakerttsi calls Atrnerseh “Kurapalat”, while Hamam is called “The Great Prince”.